

Կ-1131²-09.12.2016,03.02.2017-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 968.1-րդ հոդվածում.

1) 1-ին մասում

ա. «դրամական միջոցներ» բառերից հետո լրացնել «կամ այլ գույք» բառերը, «այդ միջոցները» բառերը փոխարինել «այդ գույքը» բառերով, իսկ «ֆոնդի միջոցներին» բառերը փոխարինել «ֆոնդի գույքին» բառերով,

բ. մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «Ֆոնդի մասնակցի կողմից ֆոնդի կառավարման պայմանագրով դրամական միջոցներից բացի թույլատրելի է տրամադրել միայն այնպիսի տեսակի գույք, որում տվյալ ֆոնդի կանոնների համաձայն ֆոնդը պատրաստվում է ներդրում կատարել:»,

2) 4-րդ մասում «դրամական միջոցների» բառերից հետո լրացնել «կամ այլ գույքի» բառերը, իսկ «այդ միջոցների» բառերից հետո լրացնել «եւ այդ գույքի» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 968.2-րդ հոդվածի 1-ին մասում «դրամական միջոցները» բառերից հետո լրացնել «եւ ֆոնդի կանոններով նախատեսված լինելու դեպքում նաեւ այնպիսի տեսակի գույքը, որում ներդրումային ֆոնդը պատրաստվում է ներդրում կատարել» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 968.4-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր՝ 2.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1) գույքի դիմաց փայ ձեռք բերելու հնարավորության տրամադրման դեպքում՝ գույքի այն տեսակները, որոնց դիմաց կարելի է ձեռք բերել տվյալ ֆոնդի փայերը, այդ գույքի գնահատման կարգը, որը կապահովի գնահատման օբյեկտիվություն.»:

Հոդված 4. Օրենսգրքի 968.9-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 1-ին նախադասության «կառավարիչն ապացուցում է, որ» բառերը փոխարինել «կառավարիչը» բառով,

2) 3-րդ նախադասությունը հանել:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ ԱԺ պատգամավորներ՝ Հակոբ Հակոբյան Ա. Մխիթարյան Վ. Մարկոսյան Ռ. Հովսեփյան 09.02.2017թ. N ՀՀ-024</p>	<p>1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.</p> <p>1. Առաջարկում եմ այն անձանց համար, ովքեր ունեն ակտիվացված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցե, նախատեսել հնարավորություն տարեկան հաշվետվությունը էլեկտրոնային ձևով ստանալու համար: Մասնավորապես, այն անձինք, ովքեր թղթային եղանակով հաշվետվությունը ստանալու դիմում չեն ներկայացրել և որևէ</p>	<p>Ընդունելի է:</p>	<p>Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետը վերախմբագրվել է: Միևնույն ժամանակ, սահմանվել է, որ այդ դրույթն ուժի մեջ է մտնում 2018թ հունվարի 1-ից՝ հաշվի առնելով դրա իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերում փոփոխությունները:</p>

	<p>դիմումում չեն նշել նախընտրելի էլեկտրոնային փոստի հասցե, սակայն ունեն պաշտոնական էլեկտրոնային հասցե, ապա մասնակիցների ռեեստրը վարողը տարեկան հաշվետվությունը էլեկտրոնային ձևով ուղարկում է անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով:</p>		
	<p>2. Նախագծում «էլեկտրոնային հասցե» բառերը փոխարինել «էլեկտրոնային փոստի հասցե» բառերով:</p>	<p>Ընդունելի է:</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
	<p>3. Նախագծի 3-րդ, 12-րդ հոդվածների տրամաբանությանը համապատասխանեցնելու նպատակով Նախագծի 21-րդ հոդվածի 1-ին կետը վերախմբագրել հետևյալ կերպ՝ «1) 2-րդ մասի 1-ին կետում «անձնագրի սերիան» բառերը փոխարինել «անձը հաստատող փաստաթղթի սերիան (առկայության դեպքում)» բառերով.»:»:</p>	<p>Ընդունելի է:</p>	<p>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>